

ԼՈՒՐԵՐ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

ՀԵԵԿ Կեդրոնական Խորհուրդը հպարտութեամբ կը յայտարարէ, թէ Երիտասարդաց Վարիչ՝ Արժ. Տ. Աւետիս Քհնյ. Աբովեանի եւ իրենց ջանքերուն շնորհիւ, Գալիֆորնիայի մէջ Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան չորս նոր մասնաճիւղեր կազմուած են, որոնք են. Սուրբ Սարգիս Հայց. Եկեղեցի՝ Սանթա Գլարիթա, Սուրբ Յովհաննէս Հայց. Եկեղեցի՝ Սան Ֆրանսիսկօ, Երեց Մասնաճիւղ, Հայց. Եկեղեցի Անապատի՝ Ռէնչօ Միրաժ, եւ Սանթա Գլարա Հովիտի՝ Գուփըրթինոյի Սուրբ Անդրէաս Հայց. Եկեղեցի: Կեդրոնական Խորհուրդը հանդիպում ունեցաւ այս չորս մասնաճիւղերու Երիտասարդութեան հետ եւ քաջալերեց զիրենք: